Տեղեկանք գործող օրենքի
լրացվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 14. Անտառաշինության սկզբունքները

1. Անտառաշինությունը անտառների կայուն կառավարման հիմքն է:
2. Անտառաշինությունն ընդգրկում է՝
ա) անտառային տնտեսության սահմանների որոշումը.
բ) տեղագրական աշխատանքների կատարումը և անտառների քարտեզագրումը.
գ) անտառային հողերի գույքագրումը, ներառյալ՝ բնական պայմանների նկարագրությունը, անտառների տեսակային և տարիքային կազմի, վիճակի, անտառային ռեսուրսների որակական և քանակական բնութագրերը.
դ) անտառավերականգնման **միջանկյալ (մատղաշ, միջահասակ անտառտնկարկներում և արտադրական նշանակության հասուն անտառներում)**, խնամքի, սանիտարական, **անտառավերականգնման կամավոր ընտրողական** և այլ հատումների, անտառավերականգնման և անտառապատման, անտառի պահպանության և պաշտպանության, ինչպես նաև այլ տնտեսական միջոցառումների կատարման տեղի, կարգի և եղանակների սահմանումը՝ հաշվի առնելով անտառների տեսակային կազմը և անտառային ճանապարհների առկայությունը.
ե) անտառներն ըստ նշանակության դասակարգելու հիմնավորումը.
զ) հաշվարկային հատատեղերի՝ անտառավերականգնման **միջանկյալ (մատղաշ, միջահասակ անտառտնկարկներում և արտադրական նշանակության հասուն անտառներում)**, խնամքի, սանիտարական, **անտառավերականգնման կամավոր ընտրողական** և այլ հատումների ծավալների հաշվարկումը.
է) անտառավերականգնման, անտառապատման, անտառների պաշտպանության, պահպանության և այլ անտառատնտեսական աշխատանքների ծավալների որոշումը.
ը) կենսաբանական բազմազանության նկարագիրը, կողմնակի և երկրորդական անտառանյութերի, անտառային հողերի օգտագործման հնարավորությունների որոշումը մշակութային, առողջարարական և ռեկրեացիոն կարիքների նպատակով:
3. Անտառաշինությունն իրավական ուժ է ստանում միայն անտառաշինական նախագծերի՝ սահմանված կարգով հաստատվելուց հետո: